Հաստատում եմ՝

1/11/2024

X Ա. Միրզոյան

Signed by: MIRZOYAN ARMANUSH 5202760272

Դպրոցի տնօրեն՝ Ա. Միրզոյան

ԵՐԵՎԱՆԻ Ա. ՂԱՐԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հ 142 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Սիմոնյան Սվետլանա Ս.

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

2023– 2024թթ. ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Դասարանի ընդհանուր բնութագիրը ուսումնական տարվա սկզբին .

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.

ա. Հայեցի դաստիարակություն.

բ. Հոգևոր դաստիարակություն.

գ. Գեղագիտական դաստիարակություն.

դ. Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն.

ե. Ֆիզիկական դաստիարակություն.

զ. Աշխատանքային դաստիարակություն.

է. Բնապահպանական դաստիարակություն.

ը. Դպրոց-ընտանիք կապը.

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. 12-րդ դասարանի իրավաբանական հոսքում սովորում է 21 աշակերտ , որից 9 տղա և 12 աղջիկ: Դասարանում ձևավորվել է համերաշխ և համագործակցող կոլեկտիվ : Աշակերտները շատ պարտաճանաչ են ,սիրով են հաճախում դպրոց, ակտիվորեն մասնակցում են դպրոցում

կազմակերպվող միջոցառումներին: Սովորելով իրավաբանական հոսքում լուրջ ուշադրություն պետք է դարձնել հայոց լեզվի, պատմության և օտար լեզվի ուսումնասիրությանը: Յուրաքանչյուրը հստակ գիտակցում է ավագ դպրոցի պահանջները և խնդիրները:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ : Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ և ամեն շաբաթ անցկացնել դասարանական ժողով: Պայմաններ ստեղծել աշակերտների առաջադիմությունն ապահովելու և ինտելեկտը զարգացնելու համար: Աշակերտների մեջ ձևավորել ինքնաճանաչողություն, ինքնակառավարման, ինքնուրույն գործելու հմտություններ: Ունենալ առողջ ապրելակերպ, պատասխանատու վարք, անսովոր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու ընդունակություն: Անց կացնել զրույցներ, կազմակերպել միջոցառումներ: Ստեղծել համերաշխ, կազմակերպված կոլեկտիվ դասարանում: Պահպանել հայոց լեզվի անաղարտությունը:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն: Աշակերտների մեջ սերմանել հարգանք հայ ժողովրդի հոգևոր արժեքների նկատմամբ: Զրույցների, միջոցառումների միջոցովերեխաներին դաստիարակել ազգային ոգով, ձևավորել հոգևոր բարձր հատկանիշներ: Մասսայականացնել ազգային և եկեղեցիական ծեսերն ու սովորույթները, պայքարել աղանդների դեմ:

3.2 Գեղագիտական դաստիարակություն: Երեխաներին սովորեցնել ոչ միայն հասկանալ այլ նաև սիրել գեղեցիկը: Նրանց մեջ ձևավորել բարձր ճաշակ արվեստի ճյուղերի նկատմամբ: Աշակերտը գիտելիքներ պետք է ունենա ճանաչված, նշանավոր հայ և արտասահմանյան արվեստագետների արվեստի մասին:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն: Ձևավորել հայեցի դաստիարակություն, սովորեցնել աշակերտներին ՀՀ հիմնը, դրոշի, զինանշանի պատմությունը: Այցելել Եռաբլուր, Ծիծեռնակաբերդ: Դաստիարակել հայրենիքին անձնազոհ նվիրվելու, այն կյանքի գնով պաշտպանելու կամքը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն: Առաջնորդվել «առողջ մարմնում առողջ հոգի» կարգախոսով: Յուրաքանչյուրը պետք է պահպանի անձնական հիգիեն, բավարարի ֆիզիկական դաստիարակության պահանջները: Ճիշտ կազմել օրվա ռեժիմը, կարգավորել հանգիստը: Խրախուսել սպորտով զբաղվողներին:

3.5 Աշխատանքային դաստիարակություն: Դրսևորել աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն: Արժևորել և գնահատել սեփական և այլոց աշխատանքը: Առաջնորդվել «ծուլությունը չարիք է» սկզբունքով: ՈՒշադրություն դարձնել շրջապատի, դպրոցի, դասարանի մաքրությանը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն: Հոգատար վերաբերմունք ցուցաբերել շրջակա բնության նկատմամբ, մասնակցել ծառատնկման աշխատանքներին և շաբաթօրյակներին: Մեզանից յուրաքանչյուրի պարտքն է բնության պահպանությունը, կանաչ գոտիների ստեղծումը:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ: Հասնել նրան, որ յուրաքանչյուրը գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ: Լինել նախաձեռնող, դրսևորել արժանավայել պահվածք: Մեծացնել ծնողի դերն աշակերտների կրթության և դաստիարակության գործում:

Աշխատանք ծնողների հետ

Ծնողական ժողովներ.

Անցկացման օրը	Քննարկվող հարցերը	Համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
/09/2022թ	Ծնողկոմիտեի ընտրություն, Ընթացիկ հարցեր: Կարգապահական և կազմակերպչական հարցեր: Առաջադիմության հետ կապված հարցեր:	Ընտրվեց և հաստատվեց ծնողկոմիտեի կազմը Դասղեկը խոսեց ընթացիկ հարցերի շուրջ, առաջարկվեց էքսկուրսիայի երթուղին և օրը: Խոսվեց կարգապահության մասին և դասղեկը հորդորեց՝ նախապատրաստվել առաջին կիսամյակի ավարտին և ավելի ակտիվ աշխատել առաջադիմության վրա:	
/01/2023 թ.	Առաջին կիսամյակի ամփոփում: Ընթացիկ հարցեր:	Առաջին կիսամյակի և գնահատականների ամփոփում: Քննությունների հանձնում:	
/05/2023 թ.	Առաջադիմության հետ կապված հարցեր: Վերջին զանգ Երկրորդ կիսամյակի և տարեկան գնահատականների ամփոփում:	Դասղեկը հորդորեց հետևողական աշխատանք տանել ուսման որակը բարձրացնելու ուղղությամբ: Դասղեկը ներկայացրեց աշակերտների առաջադիմությունը և տարեկան գնահատականները:Միասնական և ավարտական քննությունների նախապատրաստում:	

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս. շաբաթ	Ուսումնական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1	Սեպտեմբերի 1 գիտելիքի ու դպրության օր	01/09/2023	դասղեկ
2	Գիրքն իմ լավագույն բարեկամն է	08/09/2023	դասղեկ, աշակերտ
3	*Քանի լեզու գիտես այնքան մարդ ես*՝ թեմայով զրույց: Ձևավորել բազմակա ղծություն և աշխարհահայացք	15/09/ 2023	դասղեկ աշակերտ
4	*Բարեկամներ և թշնամիներ*՝ քննարկման միջոցով կներկայացվի հայ-ադրբեջանական խնդրի ծագման պատճառները:	22/09/ 2023	դասղեկ աշակերտ
5	Իմ ծնողները	29/09/ 2023	աշակերտ
	Ես էլ քեզ նման եմ՝ թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի և կատմամբ:	06/10/ 2023	աշակերտ
6	Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում՝նպատակ ն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականու թյունները:	13/10/ 2023	դասղեկ
7	*Պետական խորհրդանիշներ*՝թեմայով զրույց:Նպատակն է աշակերտներին նե րկայացնել ծագման և ձևավորման ուղին:	20/10/ 2023	դասղեկ, աշակերտ
8	*Պոլիեթիլենի տոպրակներն ու շրջակա միջավայրը*՝ ասոցացնել հին և նոր դ ասը տալ խնդրին նոր լուծումներ:	03/11/ 2023	դասղեկ, աշակերտ
9	*Եթե ես լինեի …*/ թեմայով քննարկում: Նապատակն է վերհանել կարողությունները և հմտությունները:	10/11/ 2023	դասղեկ, աշակերտ

10	*Ինչպես վարվել աղբի հետ*։օգնել սովորողներին գիտակցելու աղբի և թափոնների վնասակար ազդեցությանը բնությանն մարդու առողջության վրա:	17/11/ 2023	դասղեկ, աշակերտ
11	Վնասակար սովորույթներ , պայքար դրանց դեմ	24/11/ 2023	դասղեկ, աշակերտ
12	Սպորտը մեր կյանքում : Իմ սիրած սպորտաձևը	01/12/ 2023	դասղեկ, աշակերտ
13	Կինոն և թատրոնը մեր կյանքում	08/12/ 2023	դասղեկ, աշակերտ
14	Ամանորյա տոներ	15/12/ 2023	դասղեկ, աշակերտ
15	Առաջին կիսամյակի ամփոփում	22/12/ 2023	դասղեկ
16	Զրույց – *Ազնիվ ,հավատարիմ ընկեր* թեմայի շուրջ	12/01/ 2024	դասղեկ, աշակերտ
17	Մեկ օր առանց ինտերնետի	19/01/ 2024	աշակերտ
18	Հայկական բանակի օրը : Բանակի դերը և նշանակությունը	26/01/ 2024	դասղեկ, աշակերտ
19	Ինչպես եմ ես տանը , դպրոցում , շրջապատում	02/02/ 2024	աշակերտ
20	Մասնագիտության ընտրության կողմնորոշում	09/02/ 2024	դասղեկ, աշակերտ
21	Շախմատը մեր կյանքում	16/02/ 2024	աշակերտ
22	Հասկանանք մեկս մյուսին!	23/02/ 2024	դասղեկ, աշակերտ
23	Ինչպես լինել լավ ընկեր!	01/03/ 2024	դասղեկ, աշակերտ
24	Ուժեղ լինել , նշանակում է ....!	15/03/ 2024	դասղեկ, աշակերտ
25	Եկեք զրուցենք !	22/03/ 2024	դասղեկ, աշակերտ
26	Աշխատանքը ազնվացնում է մարդուն !	05/04/ 2024	դասղեկ, աշակերտ
27	Մայրության և գեղեցկության օր	08/04/ 2024	դասղեկ, աշակերտ
28	Ինչպես հասնել հաջողության	12/04/ 2024	դասղեկ, աշակերտ
29	Ինչպե՞ս հասկանալ մարդկանց	19/04/ 2024	դասղեկ, աշակերտ
30	Եղեռնի զոհերի հիշատակի օր	24/04/ 2024	դասղեկ, աշակերտ
31	Ազատամարտի հերոսները	03/05/ 2024	դասղեկ, աշակերտ
32	Արդարացի և անարդար արարքներ	10/05/ 2024	դասղեկ, աշակերտ
33	Դպրոց՝ ուսման դարբնոց	17/05/ 2024	դասղեկ, աշակերտ
34	Վերջին զանգ	24/05/ 2024	դասղեկ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	դասաժամը	Շաբաթվա օրը	դասաժամը
Ուրբաթ		Ուրբաթ	